ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՊ ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման հիմնախնդիրները» հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմայով հրատապ քննարկման ժամանակ որպես հարակից զեկուցողներ հանդես կգան փոխվարչապետ Միեր Գրիգորյանը և արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

2024 թվական, ապրիլի 9
Երևան

ԱԺՈ - 688 - Լ